№ 204 Նոյեմբերի 3 (15) 1881 Նոյեմբերի 3 (15) № 204

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբ., կէս տարվանը 6 րուբ.։
Առանձին համարները 5 կօպէկով։
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Օտարաքաղաքացիք գրում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր երիտասարդութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ս. Պետերբուրգից. Նամակ Մօսկվայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանիա. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Շամախուց.

ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

Միջնակարգ դպրոցներում իր ուսումն աւարտող հայ երիտասարդութիւնը ձգտում է միշտ դէպի բարձրագոյն ուսումը։ Այդ իր ձգտմանը բաւականութիւն տալու մեր երիտասարդութիւնը մի միջոց ունի միայն, այն է գնալ հեռու հիւսիս և այնտեղ մտնել բարձրագոյն դպրոցները։ Բայց ուսանող երիտասարդների մեծ մասը չքաւոր են։ Որքան զրկանքներ են կրում նրանք առանց նիւթական միջոցների Ս. Պետերբուրգի կամ Մօսկվայի իրանց համար անսովոր, խիստ հիւսիսային կլիմայում ապրելով։ Առհասարակ հիւսիսային կլիման դժուար է տանել հարաւում ծնված մի մարդու համար, բայց մանաւանդ աղքատ մարդուն, որ պէտք է զրկի իրան լաւ կերակուրից, տաք շորերից, լաւ բնակարանից....

Եւ ահա իւրաքանչիւր տարի բազմաթիւ հայ երիտասարդներ զոհվում են հիւսիսային կլիմայի մէջ ուսման ծարաւից։ Մենք ասում ենք հայ երիտասարդներ, որովհետև կովկասեան ուսանողութեան ահագին մեծամասնութիւնը ռուս համալսարաններում բաղկացած են հայերից. վրացիներից գրեթէ չը կան ուսանողների թըւում, իսկ թուրքերից և կովկասի մեր միւս ազգութիւններից ամենևին չէք պատահի Մօսկվայի կամ Ս. Պետերբուրգի համալսարանների նստարանների վրա։

Եւ ահա հայոց հասարակութիւնը, որ տեսնում է թէ իւրաքանչիւր տարի մի քանի իր զաւակներից զոհ են գնում հիւսիսային կլիմային, անասելի չքաւորութեան մէջ մարտնչելով այդ իրանց համար անսովոր կլիմային, մեր հասարակութիւնը, ասում ենք, անտարբեր աչքով է նայում այդ կորուստների վրա, կարծես թէ մեռնողները նրա զաւակներ չը լինէին։

Այդ տեսակ տխուր երևոյթի առջև ի՞նչ է մեր հասարակութեան պարտաւորութիւնը,—միթէ ինքն հասարակութիւնը չէ հասկանում։

Եթէ դեռ ևս յոյս չը կայ Թիֆլիսի համալսարանի շուտով իրագործման, գոնէ հիմնենք մի հաստատ, բարեգործական ընկերութիւն, որով կարողանայինք պահել չքաւոր հայ ուսանողներին Ռուսաստանի համալսարաններում։ Հիւսիսային կլիման, ճշմարիտ է, վնասում է ամեն մի երիտասարդի առողջութեանը, որ ծնված է հարաւում, բայց մանաւանդ հարուածում է չքաւորին, որ չունի տաք հագուստ, օրինաւոր, սննդարար կերակուր, լաւ և առողջ սենեակ։ Թող հիմնվելի ընկերութիւնը միջոց տայ չքաւոր հայ ուսանողութեանը մարտնչելու հիւսիսային երկրի առանձնայատկութիւնների դէմ։

Այդ բանի վրա մտածելը մեր ինտելիգենցիայի պարտաւորութիւնն է, մանաւանդ մեր ինտելիգենցիայի այն մասին պատկանող անհատների, որոնք այժմ կարողութեան տէր են դարձել, բայց չը պէտք է մոռանան որ իրանք մի ժամանակ իրանց չքաւորութիւն պատճառով ամեն տեսակ նիւթական և բարոյական զրկանքներ են կրել ուսանող եղած ժամանակ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Հոկտեմբերի 23

Վերջապէս ռուսաց երկաթուղիների սակագնի (тарифъ) խնդիրը ստացաւ նոր ուղղութիւն, որ հաստատվեց այս օրերս Բարձրագոյն իշխանութեամբ։ Միջազգային հեռագրական ընկերութիւնը ձեզ հաղորդել էր թէ երկաթուղիների ընկերութիւնները նոր արտօնութիւն են ստանում սակագնի վերաբերմամբ։ Այս լուրը երևի առած էր այն բազմաթիւ լրագրական համբաւներից, որոնց գլխաւորապէս շտապում էին հաղորդելու տեղիս լրագրերը իրանց ընթերցողներին այս հարցի մասին։ Բայց բանը նրանումն է, որ այն արտօնութիւնները, որք ունէին երկաթուղու ընկերութիւնները սակագնի վերաբերմամբ, մնում են նոյնը, սակայն այն զանազանութեամբ որ սակագինը ցածացնելու համար, պիտի նախ և առաջ ընկերութեան այս տեսակ դիտաւորութիւնը ներկայացնել ճանապարհային հաղորդակցութեան նախարարութեանը, պետական կօնտրօլին և ֆինանսական նախարարութեանը։

Ինչպէս Բարձրագոյն հրամանը հաստատում է կրկին ճանապար. հաղոր. նախարարութեան իրաւունքը (շատ ընկերութիւնների կանոնադրութիւնը պահանջում է այդ) և որը այժմ պիտի ծաւալվի ևս այն ընկերութեանց վրա, որոնց կանոնադրութեան մէջ չէ յիշած այս հանգամանքը։ Այս նոր արտօնութեան, խօսելով միջազգային հ. ընկ. լեզուով,—ծագման պատճառը ունեցել է, երևի, երկու շարժառիթ. Նախ՝ որ պետութիւնը ունենայ միջոց կշռադատելու թէ այս կամ այն սակագնի ցածացնելը ինչ հետևանք կարող է ունենալ ընկերութեան տարեկան եկամուտի վրա, որ, ինչպէս յայտնի է, շատ երկաթուղիների համար ապահոված է պետական գանձարանի կողմից։ Երկրորդ՝ սակագնի երերումն ընկերութեանց ձեռքին վտանգաւոր զէնք է, որով կարող են սպանել, ըստ հաճոյից՝ արմատախիլ անել անգամ որ և իցէ արդիւնաբերութիւնը յօգուտ մի ուրիշ և աննշան արդիւնաբերութեան, կամ յօգուտ մի գործատէրին և ի վնաս միւսին... Այս ուղղութեամբ շատ կօմմենտարիա կարելի է անել, եթէ չը դիմել անգամ կեանքին, որտեղ կը լսէք շատ և շատ գանգատներ, որոնք արտայայտվում են թէ մամուլի և թէ առանձնական զանազան դատակարգութեանց միջոցներով, մեր երկաթուղիների սարք ու կարգի վրա։ Այս գանգատները սպասելի էին, բայց նախատեսնել և նրանց առաջը բռնել—դժուար էր, որովհետև փորձ չը կար։ Եթէ ի նկատի առնենք արեւմտեան պետութեանց երկաթուղիների պատմութիւնը, մենք աչներն կը տեսնենք, որ ինչ որ կատարվել է այնտեղ, (ի հարկէ ուրիշ ձևով) մի և նոյնը կրկնվում է այստեղ.—Նոյնը կը պատահի այն երկրում, որտեղ այդ տեսակ ճանապարհը մուտ կը տեսնի։ Պատճառը յայտնի է. երկաթուղին մի այնպիսի ֆակտոր է, որ իր երթևեկութեան հէնց առաջին օրուանից միանգամայն յեղափոխում է այն ազգի տնտեսական կեանքը, որի երկրից նա անցնում է։ Այս յեղափոխութեան հետևանքները զանազան երկրների համար նոյնանման չեն, որպէս նոյնանման չեն ամեն ազգերի սօցիալական և տնտեսական կեանքերը... Ուրեմն արդարացի չէ այն բարոյական նախատինքը, որ գնում են այս առարկայում ղեկավարողների հասցէն, կչտամբելով նրանց թէ՝ ինչու օրինակ չեն առնում արտասահմանի երկաթուղիների կեանքից... Ընդհակառակն՝ եթէ նախատելու առիթ կայ, այս այն է որ կուրօրէն սոքա հետևել են արեւմտեան Եւրոպայի երկաթուղիների օրինակին։ Այս վերջին հանգամանքի վերաբերմամբ էլ պարսաւելու իրաւունք չունենք։ Ո՞ւմ պիտի դիմէին նոքա. տնային փորձ չունէին, արտաքինն էլ Եւրոպան է ու Ամերիկան։ Բայց սրանց փորձն էլ այն ժամանակ մանկութեան հասակումն էր։ Այժմ էլ Ամերիկայում հարիւրաւոր երկաթուղու ընկերութիւններ կոտր են ընկնում, որովհետև դժուար է նախատեսել այն հանգամանքները, որք տեղի պիտի ունենան ապագայում, երբ ճանապարհը սկսի իր գործը... Այստեղ այնպիսի պարագաներ են հարկաւոր ծանր ու թեթև անել, որք մինչև այժմ դեռ չեն ընկած մաթեմատիկական հետազօտութեանց տակ, որովհետև երկաթուղու վիճակագրական թւանշանները շատ թերի են և աղքատ։

Մեր երկաթուղիների փորձը ցոյց է տալիս, որ սակագնի երերումն շատ անգամ ինչքան վնասակար է, նոյնքան յանիրաւի։ Միւս կողմից՝ առանց սակագնի երերմանց չէ կարելի ենթարկել կանոնաւոր կեանք երկաթուղու համար։ Ուրեմն, տալով ընկերութիւններին սակագնի ցածացնելու իրաւունքը—և առհասարակ—սակագնի երերման իրաւունքը (որոշած միանգամ ընդ միշտ maximum-ի սահմանը) հարկաւոր տեսնվեցաւ դնել նրանց վրա խիստ կօնտրօլ։

Գաս. Եազուրեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

Հոկտեմբերի 22-ին

Ոչ մի քաղաքի բնակիչները Կովկասում այնքան թշուառ և անբաղդ չեն, որքան շամախեցիները։ 1859 թւականի սաստիկ երկրաշարժը զարկեց նրանց բաղդի անիւները դէպի յետ. Նահանգական քաղաքի Շամախուց Բագու տեղափոխվելը կտրեց առևտուրը, իսկ 1862 և 1872 թւականների աւերիչ երկրաշարժները բոլորովին թաղեցին շամախեցիների կենդանութեան վերջին յոյսը փլատակների տակ։ Այժմ սպառնում է շամախեցիներին մի աւելի սաստիկ հարված. Շամախին Բագու-Թիֆլիսեան երկաթուղու գծից դուրս մնալով, միանգամայն կորցնելու է իր նշանակութիւնը, վատթարանալու է նրա առևտրականների դրութիւնը, քանզի Շամախով անցուդարձ անող ճանապարհորդները, որոնք քիչ կենդանութիւն չէին տալիս նրանց առևտրի գործին, այսուհետև կը գնան երկաթուղով և էլ չեն շեղվի իրանց ուղղակի ճանապարհից Շամախի մտնելու նպատակով։ Ինչ պիտի ունենան նրանք աղքատ շամախեցիներին ծախելու, կամ ինչ նրանցից առնելու, քանի որ նրանք ճանապարհի վրա Կիօգչայում կամ Թիֆլիսում աւելի էժան կառնեն ամեն բան, ինչ որ Շամախում պիտի առնէին։ Առաջին երկրաշարժից սկսած շամախեցիներից շատերը, մանաւանդ հայերը, իրանց նեղ վիճակից ստիպված սկսել են գաղթել օտար քաղաքներ իրանց օրական հացը հայթայթելու։ Շատերին օտարութեան մէջ յաջողվել է, իսկ ոմանց համար աւելի վատ է անցնում քան թէ տեղս էր։ Շամախեցին մի կտոր հացի համար յանձն է առնում Կիօգչայի պէս մի վատառողջ տեղ ապրելու, կամ թէ Բագուի զզուելի փոշին կուլ տալու և ամառը դրա կիզիչ օդի մէջ խաշվելու, զոհ բերելով անգութ կլիմային Շամախում պահած և սնուցած մանրիկ զաւակների մեծ մասը։ Միթէ երկինքը այնքան բարկացել է շամախեցիների վրա, որ նրանց ապրուստի համար իրանց ծնված հողի վրա, որ այդքան գեղեցիկ և արգիւնաբեր է, ոչ մի ապրուստի յուսատեղ չէ թողել, այնպէս որ նրանք անշուշտ պիտի գաղթեն, որ ապրեն և ապրեցնեն իրանց գերդաստանները։ Բայց ես պիտի պատասխանեմ թէ ոչ, Շամախում կարելի է ապրել և դարձեալ երջանիկ օրեր վայելել, միայն թէ այդ քաղաքի բնակիչները հասկանային բնութեան հարստութիւնից և տեղային հանգամանքներից օգուտ քաղել—ինչպէս շամախեցիների բաղդը երկրաշարժով թաղվեց հողի մէջ փլատակների տակ, նոյնպէս էլ նա պիտի յարութիւն առնէ նրանց ունեցած արգիւնաբեր հանքերից նոր սերունդի տոկուն աշխատութեամբ։ Գետինը, կասես, լեզու առած կանչում է խեղճ ու անբաղդ շամախեցի գաղթականի յետեից ու ասում. ուր ես գնում, քո բաղդը իմ մօտ է, նա իմ ծոցումն է. քիչ մի աշխատութիւնը յանձն առ, մշակիր ինձ և ես առատ կը վարձատրեմ քո աշխատանքը, կը վերադարձնեմ քեզ քո բաղդաւոր օրերը և դու ուրախ սրտով քո հայրենիքում, բնութեան գեղեցկութեան մէջ կը օրհնես երկնքի և երկրի Աստուածը, որ ստեղծել է քո շրջակայքում այդպիսի գեղեցիկ և պտղաբեր հանդեր, որոնք քո անհոգութեան պատճառով փուշ և տատասկ են բուսցնում։ Տես թէ որքան առատ վարձատրում եմ Մատրասա գիւղի բնակիչների աշխատանքը, որոնք պարապում են քո սահմանակից հողի վրա այգեպանութեամբ և մասամբ հողագործութեամբ, նա էլ հին սիստեմայով, տես որքան առաւել կը վարձատրեմ քեզ, թէ որ նոր սիստեմայով գործելու սկսես։ Բայց առաջ շամախեցին անտարբեր է բնութեան այդ ձայնի դէմ, ծուլութեան հացը նա աւելի է սիրում, քան թէ քրտինքով նրան վաստակելը։ Շամախեցին հէնց որ 100 մանէթ փող որ և իցէ ճանապարհով ձեռք գցեց, միւս օրը մի կիսաւերակ խանութում նստած չիթեղէն կամ մանրեղէն ծախելիս կը տեսնես և մի քանի տարիներից յետ էլ սնանկացած մեծ պարտքով. քիչերն են Շամախու առևտրականներից, որ կարողացել են պահել իրանց պատիւն ու հաւատարմութիւնը մինչև օրս։ Շամախեցին օտարութեան մէջ ժիր է, աշխատասէր, տոկուն ամեն նեղութեանց մէջ, նա պատրաստ է ամենացած գործը կատարել, միայն թէ կարողանայ փող վաստակել. բայց նա իր հայրենիքում ծոյլ է և մեծասէր, կարծես թէ Շամախում ապրելով նա դրսութիւն է ստանում. Շամախեցին երբ շուկայում երեք կոպէկ բանջարեղէնի տայ, հինգ կոպէկ պէտք է մի բեռնակիր մշակի տայ, որ նրա յետեից քանի մի քայլ հեռաւորութեամբ տանէ մի թաշկինակի մէջ կապած չորս կամ հինգ ֆունտ ծանրութեամբ բեռը, իսկ ինքն սոված փորը ու անբարտաւան, կուրծքը սովորականից աւելի դուրս ձգած, ուռած և դանդաղ քայլերով գնում է նրա առջևից, կարծես թէ փողոցը տեղ չէ անում նրան։ Պարսիկ բեռնակիր մշակները լաւ հասկանալով սրանց բնութիւնը, ամեն քաղաքներից աւելի Շամախին են ընտրում իրանց աշխատանքի հանդը, թէպէտ և Պարսկաստանից